

Ուղիղ, հատված, ճառագայթ, բեկյալ գծեր

Ուղիղը ծայրակետեր չունի:

Ուղիղ-չունի ո՛չ սկիզբ, ո՛չ էլ վերջ:


Օրինակ՝ հորիզոնը:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

a ուղիղ

a

Հատվածը ուղղի մաս է: Այն ունի 2 ծայրակետ:




Հատվածը ունի սկիզբ, ունի վերջ:

- Հատվածը գծելու համար նշենք A և B կետեր, այնուհետև օգտագործելով քանոնը, դրանք միացնող գիծ տանենք: Կստանանք A և B ծայրակետերով հատված: Ասում ենք AB հատված:
- Հատվածի ծայրակետերը նշանակում են լատիներեն մեծատառերով՝ A, B, C, D, ...

Գծապատկերով նշում ենք հատվածն ամբողջությամբ:

AB հատված



Եթե AC հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, իսկ BC հատվածինը՝ 8 սմ 4 մմ, ապա AB հատվածի երկարությունը կլինի՝
 $|AB| = 3 \text{ սմ } 2 \text{ մմ} + 8 \text{ սմ } 4 \text{ մմ} = 11 \text{ սմ } 6 \text{ մմ}$



Ճառագայթը ուղղի մաս է: Այն ունի միայն մեկ ծայրակետ, որը նրա սկզբնակետն է:

Գծապատկերով նշում ենք նրա մի մասը:

Ճառագայթը ունի սկիզբ, բայց չունի վերջ:


A ճառագայթ

A




Օրինակ՝ արևի ճառագայթը:

Բեկյալ գծեր



Հաջորդաբար իրար միացած հատվածները կազմում են մի պատկեր, որը կոչվում է **բեկյալ գիծ**, իսկ այդ հատվածների երկարությունների գումարը կոչվում է **բեկյալ գծի երկարություն**:



Եթե AB հատվածի երկարությունը 3 սմ 2մմ է, BC հատվածինը՝ 4 սմ 3 մմ, իսկ CD հատվածինը՝ 5 սմ 4 մմ, ապա **բեկյալ գծի երկարությունը** կլինի՝

3 սմ 2մմ+4 սմ 3 մմ+ 5 սմ 4 մմ =12 սմ 9 մմ:


Առաջադրանքներ

1. AC հատվածի երկարությունը 4 սմ 7մմ է, BC հատվածինը՝ 10 սմ 4 մմ: Գտիր AB հատվածի երկարությունը:




$$4+7+10+4=15\text{սմ } 1\text{մմ}$$

2. AB հատվածի երկարությունը 27 սմ 6 մմ է, AC հատվածը՝ 8 սմ 4 մմ: Գտիր CB հատվածի երկարությունը:



$$27\text{սմ } 6\text{մմ} - 8\text{սմ } 4\text{մմ} = 19\text{սմ } 2\text{մմ}$$

3. Որքա՞ն է CD հատվածի երկարությունը, եթե $|AD|=125$ մմ, $|AB|=25$ մմ, $|BC|=55$ մմ:




$$25+55=80, 125-80=45\text{մմ}$$

4. Հաշվիր BC հատվածի երկարությունը, եթե $|AD|=150$ մմ, $|AB|=35$ մմ, $|CD|=52$ մմ:



$35+52=87$, $150-87=63$ մմ

5. Քանի՞ ճառագայթ կառաջացնեն երկու հատվող ուղիղները:



4


6. Լրացրու բաց թողնված բառերը:

Ճառագայթը ուղղի մաս է: Այն ունի միայն սկիզբ, որը նրա սկզբնակետն է: **Ճառագայթը** ունի սկիզբ, բայց չունի վերջ:

7. Լրացրու բաց թողնված բառը(բառերը):

Հատվածն ուղղի այն մասն է, որն ունի և սկիզբ և վերջ:

8. Հաշվեք



բեկյալ գծի երկարությունը, եթե AB հատվածի երկարությունը

5 սմ 4 մմ է, BC հատվածինը՝ 5 սմ 8 մմ, իսկ CD հատվածինը՝
7 սմ 5 մմ:
 $5+5+7=17$, $4+8+5=17$, $17+17=34$

